



Հակոբ Շահենի Անդրեասյանը ծնվել է 1962 թվականի նոյեմբերի 12-ին Մեղրի քաղաքում:

1985-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի «Հաշվապահական հաշվառում և տնտեսական գործունեության վերլուծություն» ֆակուլտետը, ստացել է տնտեսագետի որակավորում: 1985-ից 1987 թվականը ծառայել է Սովետական բանակում:

Հակոբ Անդրեասյանը մասնակցել է որակավորման մի շարք դասընթացների Հայաստանում և արտերկրում: 2007-ին «Ռիսկերի կառավարման հիմունքները» թեմայով վերապատրաստում է անցել USAID-ի կողմից և ստացել է վկայական: Համաձայն ՀՀ ԿԲ-ի կողմից ստացած վկայականի, ունի բանկի գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, տնօրինության անդամի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի պաշտոններում աշխատելու իրավունք:

Բանկային համակարգում Հակոբ Անդրեասյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է 1995 թվականի հունվարի 23-ից՝ ստանձնելով «Արդշինբանկ»-ի Արաքս բաժանմունքի կառավարչի պաշտոնը: Այնուհետև՝ 10.05.1995-28.06.1996-ը, եղել է նույն բանկի «Սպանդարյան» բաժանմունքի կառավարչի պաշտոնակատարը:



01.06.1996-01.07.1996-ը Հակոբ Անդրեասյանն աշխատել է «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԱՆԿ» կոոպերատիվում, ներկայիս «Ակբա բանկ» ԲԲԸ, որպես վարկերի գծով խորհրդատու: 01.07.1996-ից զբաղեցրել է «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԱՆԿ» կոոպերատիվի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը: Շարունակելով բանկային համակարգում ունեցած իր հարուստ աշխատանքային փորձը՝ 09.09.2006-ից Հակոբ Անդրեասյանը ստանձնել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը և ղեկավարել է Բանկի և միջազգային զանազան ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում իրականացվող վարկային ծրագրերը:

25.04.2014-ից առ այսօր Հակոբ Անդրեասյանը հանդիսանում է «Ակբա բանկ» ԲԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրենը:

2014 թվականի ապրիլի 25-ից Հակոբ Անդրեասյանը դարձել է Հայ-Ֆրանսիական Առևտրաարդյունաբերական պալատի խորհրդի անդամ, իսկ ապրիլի 29-ից Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ ՄԵՆԵՋՄԵՆԹ ՓԲԸ-ի խորհրդի նախագահ:

2017թ.-ի սեպտեմբերի 5-ի Հայաստանի բանկերի միության խորհրդի նիստի թիվ 07/2017 Արձանագրության 2017թ.-ի սեպտեմբերի 18-ից 1 տարի ժամկետով ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը նշանակվել է Հայաստանի բանկերի միության նախագահ:

2018 թվականի մարտի 16-ից Հակոբ Անդրեասյանը նշանակվել է «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության խորհրդի նախագահ: Ամուսնացած է, ունի երկու որդի: